ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանի շնորհավորական ուղերձը Կանանց միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի՛ կանայք, մայրեր, քույրեր

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Պատահական չէ, որ կանանց նվիրված այս տոնը համընկնում է գարնան գալուստին: Այն իր մեջ զարթոնքի ու վերածննդի, գեղեցկության եւ նրբագեղության խորհուրդն է ամփոփում:

Հայ կինը միշտ եղել է հավատարմության եւ իմաստության, ներողամտության եւ առաքինության խորհրդանիշ:

Սիրելի՛ կանայք, դարեր ի վեր ձեր նվիրումի եւ հոգատարության շնորհիվ է պահպանվում պետության հիմքը հանդիսացող հայ ընտանիքի ամրությունը: Անգնահատելի է ձեր դերը հայ զավակների հայեցի կրթության եւ մեր պետությանն արժանի քաղաքացիների դաստիարակության գործում:

Մեծ է հայ կնոջ ներդրումը մեր երկրի հարատեւման, ազգային շունչն ու ոգին սերնդեսերունդ փոխանցելու, ազգային ինքնության եւ հոգեւոր արժեքները պահպանելու գործում: Նա ոչ միայն բարոյական նեցուկ ու հենարան է եղել, այլեւ օրհասական պահերին, զենքը ձեռքին, անվարան կանգնել է հայոց այրերի կողքին: Այդպիսին է եղել հայուհու վեհ կերպարը մեր ժողովրդի պատմության բոլոր ժամանակներում: Այդպիսին է նա նաեւ այսօր:

Թանկագի՛ն կանայք, անուրանալի է ձեր դերը մեր պետության ոչ միայն մշակույթի, կրթության եւ առողջապահության ոլորտներում, այլեւ այսօր արդեն հասարակական-քաղաքական կյանքում: Համոզված եմ, որ ձեր՝ հասարակական-քաղաքական կյանքին օրեցօր ակտիվացող մասնակցությունը, միասնականությունը եւ խորաթափանցությունը հնարավորություն կընձեռեն լիարժեքորեն դրսեւորելու ձեր ողջ ներուժը:

Գարնանային այս գեղեցիկ տոնի՝ Մարտի 8-ի առթիվ եւս մեկ անգամ շնորհավորում եմ մեր մարզի եւ հանրապետության բոլոր կանանց, աշխարհասփյուռ բոլոր հայուհիներին՝ մաղթելով առողջություն, երջանկություն, հարատեւ հմայք եւ անսպառ գեղեցկություն;